

Հարություն Հարությունյան ինքնակենսագրություն

Ծնվել է 07.10.1986 թվականին Երևան քաղաքում: 2003-2007 թվականը սովորել է Հայաստանում Ֆրանսիական համալսարանի իրավաբանության ֆակուլտետում: 2007-2009 թվականը սովորել է նույն համալսարանի մագիստրատուրայում: Ուսումնական պրակտիկան անցկացրել է Ֆրանսիայի հանրապետության «Արամին» ընկերության միջազգային վարչությունում: Ունի ինչպես հայկական, այնպես էլ Ֆրանսիայի Լիոն 3 համալսարանի պետական դիպլոմներ:

Տիրապետում է հայերեն, անգլերեն, ֆրանսերեն և ռուսերեն լեզուներին:

2006-2007 թվականը աշխատել է «Բաղրամյանի պոլիկլինիկա և մոր ու մանկան պահպանության կենտրոն» ՓԲԸ-ում՝ որպես իրավաբան:

2008-2011 թվականը աշխատել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանում՝ որպես դատավորի օգնական:

2009 թվականին ստացել է փաստաբանական գործունեության թիվ 916 արտոնագիրը: Փաստաբանական գործունեությամբ զբաղվում է 2011 թվականի մարտ ամսից:

2012 թվականից հանդիսանում է «Իրավաբանական խորհրդատվական խումբ» ՍՊԸ-ի տնօրեն:

Հանդիսանում է «Ֆրանսախոս փաստաբանների միություն» ՀԿ-ի համահիմնադիր:

2015 թվականից առ այսօր հանդիսանում է ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի անդամ:

Ամուսնացած է, ունի երկու երեխա: